ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5253-Ա « 27 » հոկտեմբերի 2026թ.

ԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ

1. Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Վահան Ծիրանյանի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան իրականացվել է վարչարարություն:

2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26 դիմումի քննության նպատակով 2026 թվականի հոկտեմբերի 9-ին ժամը 11:00-ին հրավիրված լսումներին ներկայացել և մասնակցել է Վահան Ծիրանյանը:

Ուսումնասիրելով 2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26 դիմումը (այսուհետ՝ նաև Դիմում), վարչարարության շրջանակներում իրականացված լսումների վերաբերյալ 2026 թվականի հոկտեմբերի 9-ի արձանագրությունը, վարույթի լսումների ընթացքում ներկայացված և վարույթի շրջանակներում ստացված ապացույցները, գնահատելով Դիմումի առարկային առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշման կայացման համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Դիմումով և վարույթի լսումների ժամանակ հայտնած դիրքորոշմամբ Վահան Ծիրանյանը խնդրել է փոխհատուցել 2026 թվականի օգոստոսի 30-ին Երևան քաղաքի Պապ Թագավորի փողոցի թիվ 2 հասցեում իր սեփականությունը հանդիսացող «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղն ընկնելու արդյունքում առաջացած վնասը:

2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26 դիմումով Վահան Ծիրանյանը, հիմք ընդունելով 2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26 դիմումում նկարագրված փաստերը և «ՋԻ ԷՄ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետների կողմից 2026 թվականի սեպտեմբերի 10-ին կազմված հետքաբանական և ապրանքագիտական թիվ 26-3733 եզրակացությունները, խնդրել է փոխհատուցել 2026 թվականի օգոստոսի 30-ին Երևան քաղաքի Պապ Թագավորի փողոցի թիվ 2 հասցեում իր սեփականությունը հանդիսացող «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղն ընկնելու արդյունքում առաջացած վնասը, որը կազմում է 459.000 (չորս

հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև նշված եզրակացությունների դիմաց վճարված գումարը, որը կազմում է80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ:

2026 թվականի հուլիսի 7-ին տրված՝ տրանսպորտային միջոցի հաշվառման թիվ AB950730վկայագրի համաձայն՝«Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենան հանդիսանում է Վահան Ծիրանյանի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնականբաժնի ավագ համայնքային ոստիկանի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 3-ին նույն բաժնի պետին ներկայացվել է զեկուցագիր, համաձայն որի՝ 2026 թվականի օգոստոսի 30-ին ստացված ահազանգի կապակցությամբ այց է կատարել Երևան քաղաքի Պապ Թագավորի փողոցի թիվ 2 հասցե, որտեղ կայանված՝ Վահան Ծիրանյանի սեփականությունը հանդիսացող «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրածառի ճյուղէ ընկել:

Վահան Ծիրանյանի 2026 թվականի 28-ի թիվ Դ-104703դիմումի վերաբերյալԵրևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 7-ին հայտնվել է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ օգոստոսի 30-ին Երևան քաղաքի Պապ Թագավորի փողոցի թիվ 2 հասցեում կայանված՝ «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա կոտրված և ընկած թեղու կենսունակ ճյուղը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների կողմից մասնատվել և դուրս է բերվել տարածքից:

«ՋԻ ԷՄ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության2026 թվականի սեպտեմբերի10-ի հետքաբանական թիվ 26-3733 եզրակացության «Հետքաբանական մաս» բաժնում փորձագետը նշել է, որ համեմատելով «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վրա առկա վնասվածքների բնույթը, տեղակայումները, առաջացման ուղղվածությունները և մեխանիզմը փորձաքննությանը ներկայացված դեպքի վայրի լուսանկարների և ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից տրամադրված նյութերի հետ՝ պարզվել է, որ «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վնասվածքներն առաջացել են նշված նյութերում ամրագրված պատահարի հետևանքով, համապատասխան կառուցվածքներ ունեցող կոշտ առարկաների հետ, որպիսիք հանդիսանում են դեպքի վայրի լուսանկարներում պատկերված, ծառի չորացած և կոտրված ճյուղը, անմիջական, վերևից ներքև ուղղությամբ հարվածային բնույթի փոխազդեցությունների արդյունքում: Ընդ որում, ելնելով վնասվածքների բնույթից, տեղակայումներից ու առաջացման ուղղվածություններից կարելի է եզրակացնել, որ փոխազդեցությունները տեղ են գտել ավտոմոբիլի անշարժ վիճակում գտնվելու պայմաններում՝ նշված ծառի չորացած ճյուղը կոտրվելու և ավտոմոբիլի վրա ընկնելու արդյունքում:

«ՋԻ ԷՄ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության2026 թվականի սեպտեմբերի 10-ի ապրանքագիտական թիվ 26-3733 եզրակացության «Հետևություն» բաժնում փորձագետը նշել է, որ փորձաքննության տրամադրված «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմբիլի վրա առկա են մեխանիկական բնույթի վնասվածքներ ու հետքեր, որոնք առաջացել են ՀՀ ԱՆԳ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական

բաժնի պետի պարտականությունները կատարող Վ.Թադևոսյանի կողմից տրամադրված նյութերում ամրագրված պատահարի հետևանքով, համապատասխան կառուցվածքներ ունեցող կոշտ առարկաների հետ, որպեսիք հանդիսանում են դեպքի վայրի լուսանկարներներում պատկերված չորացած և կոտրված ծառի ճյուղը, անմիջական, վերևից ներքև ուղղությամբ հարվածային բնույթի փոխազդեցությունների արդյունքում: Ընդ որում, փոխազդեցությունները տեղ են գտել ավտոմոբիլի անշարժ վիճակում գտնվելու պայմաններում՝ նշված ծառի չորացած ճյուղը կոտրվելու և ավտոմոբիլի վրա ընկնելու արդյունքում:

Փորձաքննությանը ներկայացված «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առկա նկարագրված վնասվածքների հետևանքով պատճառված նյութական վնասի չափը կազմում է շուրջ 459.000 (չորս հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ:

Վահան Ծիրանյանի և «ՋԻ ԷՄ փորձագիտական կենտրոն»սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2026 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված՝ ծառայությունների մատուցման թիվ ԱՓ/48-26 պայմանագրի 12-րդ կետի համաձայն՝ ծառայության գինը փոխադարձ համաձայնությամբ կազմում է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, (հետքաբանական և ապրանքագիտական հետազոտությունների համար) որը Վահան Ծիրանյանի կողմից վճարվել է 2026 թվականի սեպտեմբերի 24-ին:

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիականօրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները,որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ՝նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ գույք՝ անշարժ գույք՝ հողամասերը, անշարժ գույք հանդիսացող ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյատնկիները, ստորգետնյա և վերգետնյա, այդ թվում նաև՝ կառուցվող շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 6367-2020 գրությամբ տրված պարզաբանման համաձայն՝ օրենքի իմաստով ծառը (անկախդրատեսակից) հանդիսանում է, որպես անշարժ գույք, դիտվում է որպես հողամասի պատկանելիք, հետևաբար չի կարող առանձին գրանցվել և սեփականության իրավունքով պատկանում է հողամասի սեփականատիրոջը (քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մաս):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա/ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ/ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26դիմումի հիման վրա իրականացված վարչարարությամբ և դրա շրջանակներում ստացված ապացույցներով հիմնավորվում է Վահան Ծիրանյանիսեփականությունը հանդիսացող «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենան վնասվելու հետևանքով պատճառված վնասը փոխհատուցման ենթակա լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի2026 թվականի հոկտեմբերի 7-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնի 2026 թվականիսեպտեմբերի 3-ի զեկուցագիրը, «ՋԻ ԷՄ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի սեպտեմբերի 10-ին կազմված հետքաբանական և ապրանքագիտականթիվ 36-3733 եզրակացությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով, 1058-րդ հոդվածի 1-ին մասով և 1071.1 հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Վահան Ծիրանյանի՝ վնասը փոխհատուցելու մասին 2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ Դ-104703-26 դիմումը բավարարել:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին, «ՋԻ ԷՄ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետների կողմից 2026 թվականի սեպտեմբերի 10-ին կազմված հետքաբանական և ապրանքագիտականթիվ 26-3733 եզրակացությունների համաձայն՝ «Հոնդա» մակնիշի «37 ՍՅ 653» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղն ընկնելու արդյունքում առաջացած վնասվածքների հետևանքով սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափը կազմող 459.000 (չորս հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամը, ինչպես նաև 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամը, որպես խախտված իրավունքի վերականգնման նպատակով կատարված ծախսեր, փոխհատուցել Վահան Ծիրանյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ